ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/148-2

ք. Երևան «08» 09 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Մայիլյանի, որը գործում է հիմանարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **կրթական օբյեկտների (Երևանի հ. 105 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներականկոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման)** հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից կատարման ժամկետ է սահմանվում 2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 47 555 514 (Քառասունյոթ միլիոն հինգ հարյուր հիթսունհինգ հազար հինգ հարյուր տասնչորս) ՀՀ դրամ, որից 7 925 919 (Յոթ միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր տասնինը) ՀՀ դրամը ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսեր:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

---

[31] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011035251
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

----------Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության
1 նրբ. տ 8/Ա,
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100564110000
ՀՎՀՀ 02576479

Տնօրեն՝

----------Ռ. Մայիլյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1
« » 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՆԳՀԱՇՁԲ-20/148-2 *ծածկագրով պայմանագրի*

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 105 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ և ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-2					
Երևանի հ. 105 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներականկոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների					
Հ/Հ	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի արժեքը միավորի համար հազար դրամ	Ընդհանուրի արժեքը հազար դրամ
ԲԱԺԻՆ-1					
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1. ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Պ 2.07x1.80/հ/					
1	Փայտե պատուհանի ապամոնտաժում՝ 2.07x1.80/հ/	100մ2	4.5457	65.000	295.471
2	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/հ/, բացվող	մ2	106.14	28.000	2,971.920
3	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/հ/, չբացվող	մ2	348.92	23.000	8,025.160
4	Պլաստմասսե պատուհանագոգ 45 սմ լայն	գ.մ	266.4	7.800	2,077.920
5	Արտաքին պատուհանագոգի թիթեղապատում՝ ցինկապ. թ.0,55	մ2	91.5	7.000	640.500
6	Շեպերի ցեմ. ավազի սվաղի իրականացում	100մ2	3.05	240.000	732.000
7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	3.05	195.000	594.750
8	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	37.82	6.800	257.176
	ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Պ 2.07x1.30/հ/			-	-
1	Փայտե պատուհանի ապամոնտաժում՝ 2.07x1.30/հ/	100մ2	0.1615	95.000	15.343
2	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/հ/, բացվող	մ2	2.12	28.000	59.360
3	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/հ/, չբացվող	մ2	14.02	23.000	322.460
4	Պլաստմասսե պատուհանագոգ 45 սմ լայն	գ.մ	12.9	7.800	100.620
5	Արտաքին պատուհանագոգի թիթեղապատում՝ ցինկապ. թ.0,55	մ2	4.5	7.000	31.500
6	Շեպերի ցեմ. ավազի սվաղի իրականացում	100մ2	0.131	240.000	31.440
7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.131	195.000	25.545
8	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	1.56		

				6.800	10.608
ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Պ 2.07x2.10/h/				-	-
1	Փայտե պատուհանի ապամոնտաժում՝ 2.07x1.30/h/	100մ2	0.2608	65.000	16.952
2	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/h/, բացվող	մ2	5.22	28.000	146.160
3	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/h/, չբացվող	մ2	20.88	23.000	480.240
4	Պլաստմասսե պատուհանագոգ 45 սմ լայն	գ.մ	12.9	7.800	100.620
5	Արտաքին պատուհանագոգի թիթեղապատում՝ ցինկապ. թ.0,55	մ2	4.5	7.000	31.500
6	Շեպերի ցեմ. ավազի սվաղի իրականացում	100մ2	0.161	240.000	38.640
7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.161	195.000	31.395
8	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	1.98	6.800	13.464
	Ընդամենը				**17,050.743**
2. ՆՈՐ ԴՌԱՆ ԲԱՑՎԱԾՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	Միջնորմային պատի քանդում՝ 100 մմ 1.84մ2	մ3	0.18	9.600	1.728
2	Բարավորի կառուցում՝ B15 մետոնով	100մ2	0.103	3,600.000	370.800
3	Φ 6 AC-1 ամրան	տ	0.0018	480.000	0.864
4	Մետաղապլաստե սպիտակ դուռ՝ 0.80*2.1/h/	մ2	1.68	32.000	53.760
5	Գաջե սվաղի իրականացում շեպերում	100մ2	0.02	220.000	4.400
6	Պատերի լասեքսային ներկում	100մ2	0.02	195.000	3.900
ՆՈՐ ԴՌՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	Քարե /500մմ/ պատի մեջ բացվածքի բացում	մ3	4.72	4.600	21.712
2	բացվածքի ամրացում մետաղական էլեմենտներով	տ	0.4886	185.000	90.391
3	Անկյունակ 63x5	մ	34.2	1.200	41.040
4	Շերտապողպատ՝ 50x5	մ	16.2	1.800	29.160
5	ցեմենտ ավազի սվաղ	100մ2	0.252	180.000	45.360
6	Ցանց՝ սվաղի տակ	մ2	25.2	2.400	60.480
7	Ներկում լատեքսային ներկով	100մ2	0.252	195.000	49.140
8	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	6.2	6.800	42.160
9	Լուսավորության վահանի ապամոնտաժում և վերամոնտաժում	հատ	12	1.000	12.000
ՆՈՐ ՍԱՆ. ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	Պատերի վրայից գաջի սվաղի քանդում 2,2 մ բարձ.	100մ2	0.0594	38.000	2.257
2	Մանրահատակի քանդում	100մ2	0.021	55.000	1.155
3	Անցքերի բացում միջհարկային ծածկերում Φ 120 մմ.	հատ	1	1.100	1.100
4	Միջնորմների կառուցում / 100 մմ. հաստ./ 8.4մ2	մ3	0.84	21.000	17.640
5	Միջնորմների ամրանավորում Φ 10 A500C ամրանով	տ	0.0148	380.000	5.624
6	Ցեմ. ավազե սվաղի իրականացում	100մ2	0.103	160.000	16.480
7	Գաջե սվաղի իրականացում	100մ2	0.096		

				210.000	20.160
8	Պատերի հաղճասալի իրականացում	100մ2	0.103	450.000	46.350
9	Պատերի լասեքսային ներկում	100մ2	0.096	195.000	18.720
10	Հատակի ջրամեկուսիչ շերտ շաղախ/ հեղուկ ապակի	100մ2	0.018	700.000	12.600
11	Հատակի ցեմ. ավազի հարթ. շերտ 30 մմ	100մ2	0.018	175.000	3.150
12	Մետլախից հատակների իրականացում	100մ2	0.018	500.000	9.000
13	Մետաղապլաստե սպիտակ դուռ՝ 0.75*2.1/h/	մ2	1.58	30.000	47.400
14	Կախովի առաստաղի կառուցում գունավոր պլաստիկից	100մ2	0.018	480.000	8.640
15	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	1.5	6.800	10.200
	Ընդամենը				**1,047.371**

3. ՍԱՆ. ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1	Պատերի վրայից հին ներկի քերում	100մ2	0.77	28.000	21.560
2	Փայտե դռների ապամոնտաժում՝ 0.75x2.10/h/ 6հատ	100մ2	0.095	45.000	4.275
3	Փայտե պատուհանի ապամոնտաժում՝ 2.07x1.80/h/ 6հատ	100մ2	0.2236	45.000	10.062
4	Միջնորմների քանդում / 100 մմ. հաստ./ 18մ2 6 հատ	մ3	10.8	6.900	74.520
5	Պատերից հաղճասալի քանդում	100մ2	2.1	42.000	88.200
6	Պատերից ցեմ. ավազի սվաղի քանդում	100մ2	2.1	55.000	115.500
7	Մետլախից հատակների քանդում	100մ2	1.01	42.000	42.420
8	Ցեմ. ավազե հարթաշերտի քանդում	100մ2	1.01	22.000	22.220
9	Անցքերի լացում միջհարկային ծածկերում Φ 120 մմ.	հատ	8	11.000	88.000

/Սանտեխնիկական քանդման աշխատանքներ/

1	Կոյուղու խողովակների ապամոնտաժում՝ Φ 100	մ	65.4	0.250	16.350
2	Կոյուղու խողովակների ապամոնտաժում՝ Φ 50	մ	65.4	0.200	13.080
3	Ջրի խողովակների ապամոնտաժում՝ Φ 20	մ	42.8	0.180	7.704
4	Ասիական թասերի ապամոնտաժում՝	լրակազմ	18	1.500	27.000
5	Լվացարանների ապամոնտաժում	լրակազմ	12	0.550	6.600
6	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	25.2	6.800	171.360

ՍԱՆ. ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1	Մետաղապլաստե դռների մոնտաժում՝ 0.75x2.10/h/	մ2	18.9	32.000	604.800
2	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/h/, բացվող	մ2	5.22	26.000	135.720
3	Մետաղապլաստե պատուհանի մոնտաժում՝ 2.07x1.80/h/, չբացվող	մ2	17.16	22.000	377.520
4	Միջնորմների շարում / 100 մմ. հաստ./ 20.6 մ2 6հատ	մ3	12.36	26.000	321.360
5	Պատերի ցեմ. ավազի սվաղի իրականացում	100մ2	2.37	180.000	426.600
6	Պատերի հաղճասալի իրականացում	100մ2	2.22	840.000	1,864.800
7	Շեպերի հաղճասալի իրականացում	100մ2	0.15	1,150.000	172.500

8	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	1.008	170.000	171.360
9	հատակների հիդրոմեկուսացում 1 շերտ իզոգամով	մ2	100.8	4.400	443.520
10	Մետլախից հատակների իրականացում	100մ2	1.008	980.000	987.840
11	Կախովի առաստաղի կառուցում գունավոր պլաստիկից	100մ2	1.008	680.000	685.440
12	Պլաստմասսե պատուհանագոգ 45 սմ լայն.	գ.մ	12.9	5.800	74.820
13	Արտաքին պատուհանագոգի թիթեղապատում՝ ցինկապ. թ.0,55	մ2	4.5	5.200	23.400
14	Լամինատե դռների տեղադրում/ 1.7x0.716 3.0 հատ, 1.22մ2 Մեկ սան. հանգույցում. 6 սանհանգույցներում լամինատե դռների քանակը կազմում է՝ 18 հատ կամ 21.96մ2	մ2	21.96	48.000	1,054.080
	Ընդամենը				**8,052.611**
4. ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ					
ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	Ասբոշիֆերից ծածկույթի քանդում	100մ2	3.75	18.000	67.500
2	Թիթեղյա ջրատարների քանդում	100մ	0.63	50.000	31.500
3	Փայտե ծպեղների քանդում	մ3	6.7	2.500	16.750
4	Շին աղբի հացաքում և տեղափոխում	տ	4.5	6.800	30.600
ՏԱՆԻՔԻ ԿԱՐԿԱՍ ԵՎ ԾԱԾԿՈՒՅԹ					
1	Որմնափայտ՝ 100x120(h) չորսու 59.8 գ.մ	մ3	0.72	175.000	126.000
2	Որմնափայտի կապ՝ 100x120(h) չորսու, L=1.10	մ3	0.053	175.000	9.275
3	Կանգնակ՝ 100x100(h) չորսու, h=2.25	մ3	0.27	175.000	47.250
4	Տապաստ՝ հենատախտակ 140x70(h) չորսու, L=21.60	մ3	0.21	175.000	36.750
5	Մարդակ՝ 80x120(h) չորսու, L=21.60	մ3	0.21	175.000	36.750
6	Ծպեղնատոք՝ 70x140(h) չորսու, L=9.78	մ3	3.84	175.000	672.000
7	Ծայրակցորդ՝ 50x100(h) տախտակ, L=0.90	մ3	0.27	175.000	47.250
8	Մարդակի կապ՝ 60x120(h) չորսու, L=4.30	մ3	0.37	175.000	64.750
9	Վրադիր տախտակ՝ 30x150(h) , L=0.52	մ3	0.05	175.000	8.750
10	Թեքան՝ 70x140(h) չորսու, L=2.85	մ3	0.56	175.000	98.000
11	Գագաթի տախտակ՝ 200x50(h) , L=11.80	մ3	0.24	175.000	42.000
12	Ժոլոբի տախտակամած՝ 850x30(h) , L=4.30	մ3	1.53	175.000	267.750
13	Կավարամած՝ 50x50(h) չորսու, L=20.0	մ3	2.3	190.000	437.000
14	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ3	10.63	12.000	127.560
15	Փայտե կոնստրուկցիաների հականեխիչ միջոցառումներ մածուկներով	10մ2	75	4.500	337.500
16	Օդափոխության պատուհանների կառուցում ճաղավանդակի հետ	հատ	2	35.000	70.000
17	Ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից ծածկույթի մոնտաժում ԿՊ 35-0,55	100մ2	3.75	420.000	1,575.000
18	Ջրատարների կառուցում 0.55 մմ ցինկապատ թիթեղից	100մ	0.63	960.000	604.800
19	Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ հարթ թիթեղից՝ 0,55 մմ., Φ120	կոմպ	4	55.500	222.000

20	Ձեղնահարկի պատուհանների թիթեղապատում ցինկապատ թիթեղ 0,55 մմ	մ2	15	12.000	180.000
21	Եզրակալ թիթեղ՝ 0.55 մմ հարթ ցինկապատ թիթեղով	մ2	6.2	4.200	26.040
22	Գագաթի թիթեղ՝ 0.55 մմ հարթ ցինկապատ թիթեղով	մ2	18.4	4.800	88.320
23	Տանիքի մետաղական ճաղաշարի կառուցում	100մ	0.54	350.000	189.000
24	Շերտապողպատ 50x5, ք. 2,0 մ.	գծ.մ	42	11.500	483.000
25	Պողպատե խողովակ Φ20	գծ.մ	58	1.200	69.600
26	Պողպատե խողովակ Φ15	գծ.մ	116	1.000	116.000
27	Ճաղաշարի ներկում 2 անգամ	100մ2	0.31	250.000	77.500
	Ընդամենը				**6,206.195**
	Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-1				**32,356.920**

ԲԱԺԻՆ-2

1. Օդափոխություն

1	Ուղանկյուն օդատար ցինկապատ թիթեղից δ=0.55 մմ 200x300	մ2	84.2	13.000	1,094.600
2	Օդատարի մեկուսացման ֆոլգապատ հանքային բամբակով	100մ2	0.84	180.000	151.200
3	Ճկուն օդատար մեկուսացումով Φ250	հատ	12	3.500	42.000
4	Աղմկախլացուցիչ 200x300x1000	հատ	6	8.000	48.000
5	Օդառիչ ճաղաշար 150x150մմ	հատ	6	8.000	48.000
6	Մետաղական կոնստրուկցիա ամրացման համար	100 կգ	0.32	750.000	240.000
7	Ճկուն ներդիր՝ տեքստիլ կտոր	մ2	8	2.500	20.000
8	Տանիքի օդամուղ՝ ԱՀ -4.2; L=600 մ3/ժամ ; P = 40 Պա	հատ	6	120.000	720.000
9	Համակարգի թողարկում, կարգաբերում	հատ	6	10.000	60.000
10	Անցքի բացում պատերում 300x300 մմ.	հատ	2	12.000	24.000
11	Անցքի վերականգնում պատերում	մ3	0.004	46.000	0.184
12	Անցքի բացում ե/բ ծածկերում 300x300 մմ.	հատ	18	1.400	25.200
13	Անցքի վերականգնում ծածկերում	մ3	0.036	46.000	1.656
14	Օդատարների երեսապատում գիպսակարտոնով համապատասխան մետաղական կարկասի վրա	մ2	10.8	8.000	86.400
15	Երեսապատվող մակերեսների ծեփամածկում և ներկում լատեքսով	100մ2	0.108	195.000	21.060

Նոր սանհանգույցի կառուցման աշխատանքների

1	Ուղանկյուն օդատար ցինկապատ թիթեղից δ=0.55 մմ 200x200	մ2	11.2	18.000	201.600
2	Օդատարի մեկուսացման ֆոլգապատ հանքային բամբակով	100մ2	0.11	480.000	52.800
3	Ճկուն օդատար մեկուսացումով Φ250	հատ	2	9.500	19.000
4	Աղմկախլացուցիչ 200x200x1000	հատ	1	80.000	80.000
5	Օդառիչ ճաղաշար 150x150մմ	հատ	1	12.000	12.000
6	Մետաղական կոնստրուկցիա ամրացման համար	100 կգ	0.02	750.000	15.000
7	Ճկուն ներդիր՝ տեքստիլ կտոր	մ2	0.8	2.500	2.000
8	Տանիքի օդամուղ՝ ԱՀ -4.2; L=200 մ3/ժամ ; P = 40 Պա	հատ	1		

				120.000	120.000
9	Համակարգի թողարկում, կարգաբերում	հատ	1	10.000	10.000
10	Անցքի բացում ծածկերում	հատ	4	1.200	4.800
11	Անցքի վերականգնում ծածկերում	մ3	0.008	40.000	0.320
12	Օդատարների երեսապատում գիպսակարտոնով համապատասխան մետաղական կարկասի վրա	մ2	4.8	15.000	72.000
13	Երեսապատվող մակերեսների ծեփամածկում և ներկում լատեքսով	100մ2	0.048	195.000	9.360
	Ընդամենը				**3,181.180**
	Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-2				**3,181.180**

ԲԱԺԻՆ-3

1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ.

1	Կոյուղու խողովակների մոնտաժում՝ Φ 100	մ	8.2	2.800	22.960
2	Կոյուղու խողովակների մոնտաժում՝ Φ 500	մ	2.1	45.000	94.500
3	Ջրի խողովակների մոնտաժում՝ Φ 20 /պոլիպրոպիլեն/	մ	8.6	0.800	6.880
4	Պրոպիլենե De15 խողովակի մոնտաժում	մ	1.3	0.750	0.975
5	Զուգարանակոնքի մոնտաժում՝	լրակազմ	1	40.000	40.000
6	Լվացարանների մոնտաժում՝	լրակազմ	1	35.000	35.000
8	Կոյուղու խողովակի ձևավոր մասեր՝ Φ 50	հատ	5	1.700	8.500
9	Ջրի խողովակի ձևավոր մասեր՝ Φ 20 /պոլիպրոպիլեն/	հատ	8	1.500	12.000
10	Ջրի խողովակի ձևավոր մասեր՝ Φ 15 /պոլիպրոպիլեն/	հատ	5	1.300	6.500
11	Ջրի ծորակների տեղադրում	լրակազմ	1	15.000	15.000
12	Պողպատ-պոլիպրոպիլեն Φ 20 անցումի տեղադրում	հատ	1	1.500	1.500
13	Φ 20 փականի տեղադրում	հատ	1	3.500	3.500
14	Φ 15 ճկուն միացումների տեղադրում	հատ	1	1.500	1.500
15	Հատականցքի տեղադրում՝ Φ50	լրակազմ	1	5.000	5.000
16	Φ 50 սիֆոնների տեղադրում	հատ	1	3.500	3.500

Սանտեխնիկական վերանորոգման աշխատանքներ

1	Կոյուղու խողովակների մոնտաժում՝ Φ 100	մ	74.4	2.800	208.320
2	Կոյուղու խողովակների մոնտաժում՝ Φ 50	մ	42.4	1.800	76.320
3	Ջրի խողովակների մոնտաժում՝ Φ 20 /պոլիպրոպիլեն/	մ	42.8	1.500	64.200
4	Պրոպիլենե De15 խողովակի մոնտաժում	մ	30	0.750	22.500
5	Ասիական թասերի մոնտաժում	լրակազմ	24	22.000	528.000
6	Լվացարանների մոնտաժում՝	լրակազմ	24	35.000	840.000

Սանտեխնիկական վերանորոգման աշխատանքներ

7	Կոյուղու խողովակի ձևավոր մասեր՝ Φ 100	հատ	84	1.800	151.200

8	Կոյուղու խողովակի ձևավոր մասեր՝ Φ 50	հատ	72	1.300	93.600
9	Ջրի խողովակի ձևավոր մասեր՝ Φ 20 /պոլիպրոպիլեն/	հատ	102	1.200	122.400
10	Ջրի խողովակի ձևավոր մասեր՝ Φ 15 /պոլիպրոպիլեն/	հատ	108	1.500	162.000
11	Ջրի ծորակների տեղադրում	լրակազմ	24	11.000	264.000
12	Պողպատ-պոլիպրոպիլեն Φ 20 անցումի տեղադրում	հատ	12	1.500	18.000
13	Φ 15 ճկուն միացումների տեղադրում	հատ	42	1.500	63.000
14	Հատականցքի տեղադրում՝ Φ50	լրակազմ	6	3.000	18.000
15	Φ 50 սիֆոնների տեղադրում	հատ	24	3.500	84.000
	Ընդամենը				2,972.855
	Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-3				2,972.855
ԲԱԺԻՆ-4					
1. Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս					
1	Հաղորդալար պղնձե ՊՎ-3 1x1,5մմ2 կարմիր	100մ	0.75	50.000	37.500
2	Հաղորդալար ՊՎ-3 1x1,5 մմ2 կապույտ	100մ	0.75	56.000	42.000
3	Հաղորդալար ՊՎ-4 1x4 մմ2 դեղին	100մ	0.9	55.000	49.500
4	ավտոմատ անջատիչ եռաբևեռ -C50A, 10kA	հատ	6	15.000	90.000
5	էլ. վարդակ երկբևեռ, պատի մեջ տեղադրվող հողանցման հպակով 16A, 230Վ	100հատ	0.06	650.000	39.000
6	Անջատիչ երկու սեղմակով, պատի մեջ տեղադրվող	100հատ	0.06	320.000	19.200
7	Մոնտաժային տուփ (մեկ տեղանոց) 70x70x43 մմ	հատ	6	5.000	30.000
8	Ամրակներ 9 մմ2	տուփ	2	8.000	16.000
9	Լուսատու Լեդ, կախովի առաստաղի	100հատ	0.24	1,100.000	264.000
10	Ակոսի փորում	100մ	1.98	15.000	29.700
11	Ակոսի սվաղում	100մ2	0.396	25.000	9.900
12	Հին լուսատուների ապամոնտաժում	100հատ	0.12	10.000	1.200
13	Տուփեր անջատիչների և վարդակների համար.	հատ	12	0.200	2.400
ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼ. ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ					
1	Հաղորդալար պղնձե ՊՎ-3 1x1,5մմ2 կարմիր	100մ	0.12	67.000	8.040
2	Հաղորդալար ՊՎ-3 1x1,5 մմ2 կապույտ	100մ	0.12	56.000	6.720
3	ավտոմատ անջատիչ եռաբևեռ -C50A, 10kA	հատ	1	200.000	200.000
4	էլ. վարդակ երկբևեռ, պատի մեջ տեղադրվող հողանցման հպակով 16A, 230Վ	100հատ	0.01	350.000	3.500
5	Անջատիչ երկու սեղմակով, պատի մեջ տեղադրվող	100հատ	0.01	250.000	2.500
6	Մոնտաժային տուփ (մեկ տեղանոց) 70x70x43 մմ	հատ	1	5.000	5.000
7	Ամրակներ 9 մմ2	տուփ	0.2	8.000	1.600
8	Լուսատու Լեդ, կախովի առաստաղի	100հատ	0.01	1,200.000	12.000
9	Ակոսի փորում	100մ	0.26	15.000	3.900
10	Ակոսի սվաղում	100մ2	0.052	25.000	1.300

11	Տուփեր անջատիչների և վարդակների համար.	հատ	2	0.200	0.400
12	ՊՊՎ 2x2.5 մմ2 . հաղորդալարի մոնտաժում	100մ	0.12	60.000	7.200
13	ավտոմատ անջատիչ երկբևեռ -20A	հատ	1	4.500	4.500
14	Անջատման և միացման կոճակների տեղադրում սենքերում	100հատ	0.06	250.000	15.000
	Ընդամենը				902.060
	Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-4				902.060
ԲԱԺԻՆ-5					
1. Կոյուղու ելքի խողովակի և ջրի մուտքի խողովակների վերանորոգման ծավալները					
1	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում	1000մ3	0.016	5,500.000	88.000
2	Նախապատրաստական շերտ խրամուղում ավազի շերտով 10 սմ. հաստությամբ	մ3	1.4	5.500	7.700
3	Կոյուղու պոլիպրոպիլենից խողովակներ D110	մ	13.6	3.000	40.800
4	Բետոնե հատակների քանդում	մ3	1.2	9.600	11.520
5	Բետոնե հատակների վերականգնում	մ3	1.2	36.000	43.200
6	Անցքի բացում պատի մեջ	հատ	2	1.200	2.400
7	Անցքի վերականգնում պատերում	մ3	0.02	42.000	0.840
8	Խրամուղու հետլիցք	100մ3	0.158	140.000	22.120
	Ընդամենը				216.580
	Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-5				216.580
	Ընդամենը				39,629.595
	ԱԱՀ	20.00 %			7,925.919
	Ընդամենը				47,555.514

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- Ռ. Մայիլյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
« 08 » 09 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՀԲ-20/148-2» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 105 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ և ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
	Բաժին-1		
	Շինարարական աշխատանքներ		
1	Պատուհանների փոխարինման աշխատանքներ Պ2.07x1.80 /հ/, Պատուհանների փոխարինման աշխատանքներ Պ2.07x2.10 /հ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
2	Նոր դռան բացվածքի իրականացման աշխատանքներ /նոր դռների ամրացման աշխատանքներ, նոր սան. հանգույցի կառուցման աշխատանքներ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
3	Սան. հանգույցների քանդման աշխատանքներ /սանտեխնիկական քանդման աշխատանքներ, սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
4	Տանիքի վերանորոգում /ապամոնտաժման աշխատանքներ, տանիքի կարկաս և ծածկույթ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-2		
	Օդափոխություն		
1	Օդափոխություն /նոր սանհանգույցի կառուցման աշխատանքների/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-3		
	Ջրամատակարարում և կոյուղի		
1	Ջրամատակարարում և կոյուղի /սանտեխնիկական վերանորոգման աշխատանքներ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-4		
	Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս		
1	Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս /օդափոխության համակարգի էլ. մատակարարում	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-5		
	Կոյուղու ելքի խողովակի և ջրի մուտքի խողովակների վերանորոգում		
1	Կոյուղու ելքի խողովակի և ջրի մուտքի խողովակների վերանորոգում	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Ընդամենը 2020 թ. կատարվող աշխատանքներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվկանի դեկտեմբերի 1-ը ներառյալ

02698732

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
----------Վ. Գասպարյան

«ԱՐԹԱՇԻՆ» ՍՊԸ
"ARTMASHIN" LLC
02570479

ԿԱՊԱԼԱՌՈՒ
----------Ռ. Մայիլյան

Հավելված թիվ 3
«08» 09 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՀԲ-20/148-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի			ՀՀ դրամ												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին, պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45611100/63	կրթական օբյեկտների հիմնանորոգում-2								47 555 514	47 555 514	47 555 514	47 555 514	47 555 514	47 555 514

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- Ռ. Մայիլյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 4
«08 » 09 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՀԲ-20/148-2» ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ և ԱՅԼՆ) և ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ և (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 105 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ և ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 105 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի -ի շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան 10 (տաս) տարվա երաշխիքային ժամկետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- Ռ. Մայիլյան
/ստորագրություն/
Կ.Տ